ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEF8-D8F6-401C-A2ED հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/3343/02/24 ք. Երևան
25 Նոյեմբերի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիականդատարանի(այսուհետնաև՝Դատարան) դատավոր Տիգրան Գրիգորյանս, ծանոթանալով թիվ ԵԴ2/3343/02/24 քաղաքացիականգործի նյութերին,

ՊԱՐԶԵՑ

Դատարանի (դատավոր՝ Ա.Սաֆարյան) վարույթում է գտնվել քաղաքացիական գործն ըստ հայցի «Ստարկ Գրուպ» ՍՊԸ-ի ընդդեմ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի՝ թիվ «ՀԱՆ-ԽԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2024թ. թիվ 2 արձանագրությամբ «Ծատուրյան Քընսալթինգ» (Արայիկ Ծատուրյան ԱՁ)-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջների մասին:

Էլեկտրոնային համակարգով քաղաքացիական գործը 24.11.2025թ. վերամակագրվել է դատավոր Տ.Գրիգորյանին և հասանելի է դարձել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Վերոգրյալի հիմամ վրա՝ Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը պետք է ընդունել վարույթ, դրա քննությունը շարունակել ընդհատման պահից և նշանակել եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑ

Քաղաքացիական գործն ընդունել վարույթ, քննությունը շարունակել ընդհատման պահից և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 22.12.2025թ.:

Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարությանը:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2025.11.25 16:41:14 AMT

Դատավոր՝
Տիգրան Գրիգորյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am